Արմավիրի մարզի «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Զ.Ստեփանյան

Թեմատիկ պլանավորում

2023-2024 ուստարի

I կիսամյակ

Առարկան Երաժշտություն

Դասարան VII

Ժամաքանակ 15 ժամ

Ուսուցիչ Զարիհ Հովհաննիսյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Ս.Հարությունյան

Համապատասխանում է պետական չափորոշչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Վ.Սարգսյան

Digitally signed by STEPANYAN ZARUHI 5205770120
Date: 2023.09.10 08:26:51 AMT

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
VII դասարան
I կիսամյակ, 15 ժամ
Շաբաթական 1 ժամ

Թեմա 1. Հայ ազգային երգեր և պարեր

Ժամ	*Տեսական նյութ*	*Ունկնդրում / դիտում*	*Գործնական աշխատանք*	*Էջ*
1	Ներածություն	Կոմիտաս՝ «Հով արեք» Ժողովրդական տարբերակ, երգչախմբային մշակում	«Հով արեք» երգի ուսուցում	3-14
	Գեղջկական երգի ժանրերը. Կրող և բանահավաք	Կոմիտաս՝ «Հոյ Նազան», Մշ.՝ Կոմիտաս, Սերուժ Քրաջյան	«Հոյ Նազան» երգի ուսուցում	
2	Հայրիկ Մուրադյան Ազգային պար. գյովնդ և վերվերի	«Ամռան գիշեր» «Մեր տան հիտև» Գյովնդ. ուս ուսի	«Ամռան գիշեր» երգի ուսուցում Գյովնդ և «Մեր տան հիտև» Երկուսի համակցում որպես պարերգ	15-20
3	Ազգային պար. թամզարա	Թամզարա. ուս ուսի	Թամզարա երգ և պար	21-22
4	Ծիսական երգեր և պարեր. հարսանեկան Ծննդյան երգեր կամ ավետիսներ	Կոմիտաս՝ «Էն դիզան» Կոմիտաս՝ «Զար զընգը» Շավալի. ուս ուսի	«Էն դիզան» «Զար զընգը» Շավալի «Ավետիս»	23-28
5	Բարեկենդանի երգեր Համբարձման երգեր Վարդավառի երգեր		«Գացեք տեսեք» «Ծաղիկ ունեմ նարնջի» «Սոնա յար»	29-34
6	Աշխատանքային երգեր և պարեր. երկրագործական		«Հոլ արա, եզո»	35-41

7	Վիպական երգեր Ռազմական երգեր ու պարեր	«Սասնա ծռեր»՝ «Կայթ» «Տո խրոխպեր»՝ Հայրիկ Մուրադյան «Ափսոս»՝ «Կարին» Քոչարի. ուս ուսի	Կարնո քոչարի պար «Ձայն մը հնչեց» երգ	42-49
8	Կոմիտաս	Կոմիտաս. «Առավոտուն բարի լուս», «Հովեր»		49-54

Թեմա 2. Հայ աշուղական արվեստ

Ժամ	*Տեսական նյութ*	*Ունկնդրում / դիտում*	*Գործնական աշխատանք*	
9	Գուսան, տաղերգու, աշուղ Ժողովրդակա՞ն երաժշտություն, թե՞ այլ իրողություն Բովանդակություն	Շիրին «Այգեպան, ի՞նչ ես անում» Սայաթ-Նովա «Քանի վուր ջան իմ» Սայաթ-Նովա «Դուն էն հուրին իս»	«Դուն էն հուրին իս»	55-66
10	Աշուղների կարգերը, Տաղաչափություն և տեխնիկա Սայաթ-Նովա	Սայաթ-Նովա «Առանց քիզ ինչ կոնիմ» Ռիչարդ Առյուծասիրտ «Դուն էն գլխեն իմաստուն ես» Ալեքսանդր Սպենդիարյան՝ «Երևանյան էտյուդներ» «Քանի վուր ջան իմ» Առնո Բաբաջանյան՝ «Էլեգիա»		66-73
11	Ջիվանի և Շերամ	Ջիվանի՝ «Խելքի աշեցեք» Շերամ՝ «Փնջլիկ-մնջլիկ»	«Փնջլիկ-մնջլիկ»	73-76

Թեմա 3. Հայ կոմպոզիտորների երգարվեստը

Ժամ	*Տեսական նյութ*	*Ունկնդրում / դիտում*	*Գործնական աշխատանք*	
12	Առնո Բաբաջանյան Էդգար Հովհաննիսյան Ստեփան Լուսիկյան Արմեն Սմբատյան Ռոբերտ Ամիրխանյան	« Առաջին սիրո երգը» ֆիլմից «Անուշ անուրջով» «Երազի իմ երկիր» «Հայրիկ» ֆիլմից	«Առաջին սիրո երգը» «Верни мне музыку» «Անուշ անուրջով» «Սարդարապատ» «Նոր Հայաստան» «Հայաստան» «Երազի իմ երկիր»	81-92

Թեմա 4. Դասական հանրամատչելի երաժշտություն

Ժամ	*Տեսական նյութ*	*Ունկնդրում / դիտում*	*Գործնական աշխատանք*	
13	Ներածություն Վիեննական դասական երաժշտություն. Հայդն, Մոցարտ, Բեթհովեն Սոնատային ձև	Յ. Ս. Բախ, Տոկատա և ֆուգա Ջ. Վերդի, արիա «Ռիգոլետտո» օպերայից Ալլեգրի՝ “Miserere” Մոցարտ՝ Սիմֆոնիա 40	Սոնատային ձևի վրա աշխատանք	93-101
14	Բեթհովեն Ռոմանտիկական երաժշտություն	Հինգերորդ սիմֆոնիա Իններորդ սիմֆոնիա Շուբերտ՝ “Ave Maria” Ռոսսինի՝ «Վիլհելմ Տելլ»		101-104
15	Կամիլ Սեն-Սանս, ծրագրային երաժշտություն Իմպրեսիոնիզմ	«Կենդանիների շքահանդես» Դեբյուսի՝ «Ֆավնի հետկեսօրյա հանգիստը»		105-109

ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ճանաչելի դարձնել հայ երաժշտության հիմնական ճյուղերը՝ ժողովրդական, գուսանա-աշուղական, կոմպոզիտորական:

Մատուցել համակարգված գիտելիքներ հայ ժողովրդական և գուսանա-աշուղական երաժշտության ոլորտներում, ծանոթացնել երգի ժանրում ստեղծագործած որոշակի հայ կոմպոզիտորների արվեստին, ծանոթացնել դասական երաժշտության մատչելի նմուշների:

Հայ ժողովրդական, աշուղական և կոմպոզիտորական երգերի որոշակի նմուշների ուսուցման միջոցով աշակերտներին դարձնել դրանց կրողը:

Զարգացնել երաժշտություն կատարելու որոշակի հմտություններ:

Զարգացնել երաժշտություն ունկնդրելու հմտություններ: Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ այս դրույթը, սակայն երաժշտությունն ունկնդրելու և այն ըմբռնելու նպատակը առաջնային է:

Զարգացնել երաժշտությունն արժևորելու, գնահատելու, զանազանելու որոշակի համակարգ:

Օգնել կիրառել երգերը կենցաղում, առօրյայում, տոների ընթացքում և այլն:

Նպաստել որոշակի արժեհամակարգի ձևավորմանը՝ երաժշտության ուսուցման ճանապարհով:

Նպաստել աշակերտի խոսքի և ինքնարտահայտման ունակությունների զարգացմանը:

Խթանել ստեղծագործական մտածողությունը:

Խթանել խմբային աշխատանքի հմտությունների զարգացումը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կիրթ, որակյալ և քաղաքացիական ու իրավական բարձր գիտակցությամբ քաղաքացիներ դաստիարակելու համար խիստ կարևոր է արվեստների ու մասնավորապես երաժշտության ակտիվ ներգրավվածությունը հանրակրթության ոլորտում: Հետազոտությունները փաստում են, որ երաժշտության մեջ ներգրավվածությունը ավելի

որակյալ է դարձնում այլ ոլորտների, այդ թվում թե՛ տեխնիկական, թե՛ հումանիտար գիտաճյուղերի յուրացումը աշակերտների շրջանակներում[1]:

Իրական հայկական երաժշտության ճանաչումը, նրա ժանրերի տարբերակումը, գործնական նմուշների կատարումը սույն դասագրքի հիմնական խնդիրների մեջ է: Ինչպես գիտենք, ներկայում՝ համաշխարհային երաժշտական շուկայի բաց և դյուրին հասանելիության պայմաններում, երբեմն աշակերտների շրջանակներում խախտվում են հայ երաժշտության մասին պատկերացումները: Ավելին, հաճախ աշակերտները լսում են զանգվածային մշակույթին պատկանող երգեր, որոնք փոխառված են այլ մշակույթներից, և դրանք ընկալում են որպես հայկական: Դասագրքի խնդիրն է՝ ճանաչելի դարձնել իրական հայկական մշակույթը:

Հարկավոր է հասնել այնպիսի դաստիարակության, որտեղ հայ աշակերտի մայրենի մշակույթը հայկականն է[2]: Հայ աշակերտը պետք է լինի հայկական երաժշտության լիարժեք կրողը, պահպանողն ու պատասխանատուն՝ միևնույն ժամանակ ճանաչելով և գնահատելով դասական երաժշտությունը:

ՀՀ քաղաքացին պետք է լիարժեքորեն տիրապետի հայկական մշակույթի առանձնահատկություններին: Երաժշտություն առարկան յոթերորդ դասարանում կարևոր քայլ է այս խնդրի լուծման ճանապարհին: Դասագրքի հիմնական մասն են կազմում հայ ճյուղերը և դրանցից գործնական նմուշներ ուսուցանելն օժանդակում են այս կարևոր խնդրի լուծմանը:

Գոյություն ունի երաժշտությանը (նաև այլ արվեստներին) առնչվելու երկու հիմնական ձևաչափ՝ պասիվ և ակտիվ մասնակցություն [1] : Պասիվ մասնակցության պարագայում աշակերտները լսում են երաժշտություն, սովորում գնահատել այն, տարբերակել ոճերն ու ժանրերը, ճանաչել երաժշտության տարբեր ոլորտները՝ ժողովրդականից մինչև ակադեմիական և այլն, ճանաչել նաև մի շարք կոմպոզիտորների ու նրանց անունները: Ակտիվ մասնակցությունը ենթադրում է սեփական կատարման կամ վերարտադրման միջոցով հմտությունների ձևավորում կամ կատարելագործում: Այսպես՝ արվեստին պասիվ մասնակցություն է պատկերասրահ կամ թանգարան հաճախելը, ճարտարապետական հուշարձան այցելելը, երաժշտություն լսելը համերգասրահում կամ

այլուր և այլն: Ակտիվ մասնակցության պարագայում աշակերտն ինքն է նկարում, ինքն է քանդակում, ինքն է նվագում կամ ստեղծագործում: Թեև երաժշտությանն առնչվելու թե՛ պասիվ, թե՛ ակտիվ մեթոդներն են կարևոր աշակերտի զարգացման համար, ակնհայտ է, որ ակտիվ մասնակցության պարագայում արդյունքն ավելին է: Դասագրքի կարևոր խնդիրներից մեկն էլ հենց մասնակցային ճանապարհով երաժշտությանն առնչակից դարձնելն է: